Հաստատված է

Դիլիջանի ավագ դպրոցի

մանկավարժական խորհրդի N1 նիստում

« 31 » օգոստոս 2022 թվական

Դիլիջանի ավագ դպրոցի

տնօրեն՝ Ա. Արամյան

ԴԻԼԻՋԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Անահիտ Ավագյան

2022 -2023 ՈՒՍՄԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրապետության պետական կրթակարգի գլխավոր նպատակը որակյալ կրթության ապահովումն է, կրթության հանդեպ հայ ժողովրդի ավանդական վերաբերմունքի պահպանումն ու ամրապնդումը, ՀՀ հանրակրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

Դիլիջանի ավագ դպրոցը 2022– 2023 ուստարում կարևորագույն խնդիրներից մեկն է համարում դասապրոցեսի կազմակերպումը ժամանակակից մեթոդներով և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական, մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով: Հատուկ ուշադրություն դարձնել աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը: Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական, մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ մշակված ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:

Փորձարկել նոր չափորոշիչները 10-րդ և 11-րդ դասարաններում:

Դպրոցի սովորողներին մասնակից դարձնել դպրոցականների առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին: Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

Համակարգել ուսուցիչների աշխատանքը ուսումնական պլանների, կրթական ծրագրերի կատարման, ինչպես նաև ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման ուղղությամբ: Հսկողություն իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը:

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումների կատարման համար
1	2	3	4	5
1.	Դպրոցական ընդհանուր և ուսումնական ծանրաբեռնվածությունը կարգավորելու նպատակով մշակել և իրականացնել մի շարք գործնական միջոցառումներ: ա/ դպրոցի ուսումնական ռեժիմի խստիվ ապահովում բ/ դասացուցակի կազմում գ/ ուսումնական պարապմունքների կազմակերպում	օգոստոս-սեպտեմբեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
2.	Ծանոթանալ 2022-2023 ուստարվա ուսումնական պլանին, կատարել առարկայական բաշխում:	օգոստոս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
3.	Անցկացնել ուսուցիչների սեմինար խորհրդակցություն, նրանց ծանոթացնել գործող կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները:	օգոստոս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
4.	Օգոստոսյան առաջին մանկավարժական խորհրդում նշանակել առարկայական մեթոդ միավորման նախագահներ:	օգոստոս	Տնօրեն	
5.	Անցկացնել առարկայական մ/մ նիստեր, ծանոթացնել նոր ուսումնական տարվա աշխատանքային պլանին, տալ հանձնարարականներ: Հանձնարարել մ/մ նախագահներին վերանայել նախորդ տարվա աշխատանքային թերացումները և մ/մ –ի տարվա աշխատանքային պլանում անդրադառնալ նախորդ բացթողումներին:	օգոստոս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
6.	Խիստ ուշադրություն դարձնել ուսուցիչների աշխատանքային կարգապահությանը (ուշացում, անհարգելի բացակայություն):	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
7.	Պարբերաբար ստուգել էլեկտրոնային մատյանները	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
8.	Ստուգել ծրագրային նյութերի և թեմատիկ պլանավորման առկայությունը ուսումնական առարկաներից և հաստատել:	09.09-15.09	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
9.	Յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ հրավիրել առարկայական մասնախմբերի մեթոդմիավորման նիստեր:	ուսումնական տարվա ընթացքում	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
10.	Կատարել մնացորդային գիտելիքների ստուգում:	սեպտեմբեր - հոկտեմբեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	

11.	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ԿԳՄՄՆ-ի հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
12.	Ուսումնասիրել առաջավոր աշխատանքի փորձը և տարածել դպրոցում: Խնամքով նախապատրաստել և կազմակերպել առանձին թեմաների ուսումնասիրություն տարբեր ուսուցիչների մոտ: Գործնական օգնություն կազմակերպել ուսուցչի աշխատանքի գիտական կազմակերպման համար:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
13.	Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման և ատեստավորման նախապատրաստման դասընթացներում (ըստ պահանջի):	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
14.	Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ մանկավարժներին: Հատուկ ուշադրության արժանացնել սկսնակ ուսուցիչներին:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
15.	Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ, կոնսուլտացիաներ տարբեր թեմաներով:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
16.	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
17.	Ուշադրության արժանացնել աշխատանքին, անհրաժեշտության դեպքում տրամադրել նյութական օգնություն:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, ուսուցիչներ	
18.	Գիտելիքների որակը բարելավելու նպտակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մ/մ նիստերում, տնօրենին կից խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդի նիստերում:	կիսամյակի ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
19.	Նոր չափորոշիչների փորձարկմամբ պայմանավորված 10-րդ և 11-րդ դասարաններում մեթոդմիավորումների, համապատասխան օղակների օգնությամբ ուսումնասիրել հետևյալ առարկաների դասավանդման դրվածքը. բնագիտություն, քիմիա, հայոց լեզու և հայ գրականություն, արվեստ	1-ին կիսամյակ 2-րդ կիսամյակ	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
20.	Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների վիճակը ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության դասերին: Հայոց լեզու, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ՆԶՊ և այլ առարկաներից յուրաքանչյուր ամիս մեկ անգամ անցկացնել դաս համակարգչային դասասենյակում:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
21.	Կազմակերպել առարկայական միամսյակներ և շաբաթներ. ա/ պատմություն, աշխարհագրություն բ/ Հայոց լեզու և հայ գրականություն	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս.	

	գ/ Օտար լեզուներ /անգլերեն, ռուսաց լեզու դ/ֆիզիկա, մաթեմատիկա ե/ քիմիա, կենսաբանություն զ/ֆիզկուլտուրա		աշխ. գծով, մ/մ նախագահներ	
22.	Մասնակցել առարկայական միջազգային մրցույթներին՝ <<Կենգուրու>>, <<Մեղու>>	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
23.	Կատարել նախապատրաստական աշխատանքներ առարկայական մրցույթների մասնակիցների հետ:	ուսումնական տարվա ընթացքում	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ, առարկայական ուսուցիչներ	
24.	Անցկացնել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը: Մասնակցել համայնքային, մարզային, հանրապետական և համալսարանական օլիմպիադաներին:	դեկտեմբեր-մայիս	Տնօրենություն, առարկայական հանձնաժողովներ	
25.	Ուսուցիչների առարկայական և մեթոդական պատրաստվածության ուսումնասիրություններ:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
26.	Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ծանոթանալու և համապատասխան աշխատանք կազմակերպելու նպատակով, մինչև կիսամյակային գրավոր աշխատանքները, ստուգողական գրավոր աշխատանքներ անցկացնել հայոց լեզվից, մաթեմատիկայից (հանրահաշիվ, երկրաչափություն), արդյունքները քննարկել մասնախմբերում:	դեկտեմբեր-ապրիլ	Տնօրենություն, մ/մ նախագահներ	
27.	Վերահսկել ծրագրի կատարողականը:	02.12-16.12.2022թ.	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
28.	Մասնախմբերի օգնությամբ ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման վիճակը, լաբորատոր և գործնական աշխատանքների կատարողականը:	դեկտեմբեր-ապրիլ	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
29.	Առանձնահատուկ ուշադրություն դարձնել խմբակների գործունեությանը 10-11-րդ դասարաններում:	ուսումնական տարվա ընթացքում	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ, դասավանդող ուսուցիչներ	
30.	Նախապատրաստվել պետական ավարտական քննություններին:	դեկտեմբեր, մայիս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	

31.	Պատրաստել 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակետների քննական թեստերը և կազմել հանձնաժողով:	դեկտեմբեր, մայիս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
32.	Առանձնակի ուշադրություն դարձնել քննական առարկաների դասավանդմանը և մեթոդիկային:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
33.	Վերահսկել ծրագրի կատարողականը:	01.05-16.05.2022թ.	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
34.	Սկսել քննական աշխատանքների նախապատրաստական փուլը, կազմել հանձնաժողովներ, հերթապահության գրաֆիկ, կոնսուլտացիայի օրեր, ստուգող հանձնաժողով:	դեկտեմբեր, մայիս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
35.	Կազմակերպել փոխադրական քննություններ 10-11-րդ դասարաններում:	մայիս-հունիս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, մ/մ նախագահներ	
36.	Ավարտական քննություններից անբավարար ստացած և երկու առարկայից անբավարար գնահատական ունեցող աշակերտների վերաքննությունների կազմակերպում:	հուլիս-օգոստոս	Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով, դասղեկներ	
37.	Ընթացիկ կազմակերպչական հարցեր	ուսումնական տարվա ընթացքում	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	